# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/168
*07 օգոստոս 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 54-Ա, 55-Ա, 56-Ա որոշումները:

Առդիր՝ 3 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 54-Ա

### 06-023-0046-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՔՍԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ա. Նիկողոսյանի դիմումը, անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը կազմված 02.11.1985 թ-ին , հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991 թ.-ի թիվ 2 որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /06.04.2017 թ-ի սեղանամատյան թիվ 761/, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.Վերականգնել 06-023-0046-0006 ծածկագրի տակ գտնվող 0.16361 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1989 թ կառուցված 417.64 քմ մակերեսով բնակելի տան , 1989 թ կառուցված 10.17 քմ մակերեսով մառանի և 1999 թ կառուցված 26.08 քմ մակերեսով հավանոցի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արաքսի Արարատի Նիկողոսյանի /ծնված 1954 թ/ սեփականության իրավունքը:

2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արաքսի Նիկողոսյանի սեփականության իրավունքը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Հողամասում առկա է ինքնակամ 2014 թ-ին կառուցված 3.19 քմ մակերեսով կաթսայատուն:

6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե ՝ գ. Բազում 3 փողոց թիվ 27:

7.Անվավեր ճանաչել առաջին պետական գրանցման շրջանակներում ներկայացված սեփականաշնորհումից քաղվածքը և որպես հողահատկացման փաստաթուղթ հիմք ընդունել 28.12.2016 թ ներկայացված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման որոշումից քաղվածքը:

8.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 55-Ա

### ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բազում համայնքի ավագանու 28.06.2017 թ-ի «06-023-0228-0007» ծածկագրի հողամասը վարձակալության տրամադրելու մասին » թիվ 34-Ա որոշումը, 04.08.2017 թ-ի թիվ 7 արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76 և 81 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1. Մրցույթում հաղթող ճանաչված Վրեժիկ Մկրտչի Բռագայանին 25 տարի ժամանակով վարձակալության տրամադրել 06-023-0228-0007 ծածկագրի գյուղնշանակության 4-րդ կարգի վարելահողը /0.16314 հա/ 1800 դրամ տարեկան վարձավճարով և կնքել վարձակալության պայմանագիր:

2. Հողամասի պետական գրանցման ծախսերն իրականացնել Վրեժիկ Բռագայանի հաշվին:

3. Պայմանագիրը 10 օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չներկայացնելու դեպքում սույն որոշումը համարել չեղյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 56-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բազում համայնքի ավագանու 28.06.2017թ-ի «06-023-0238-0014» ծածկագրի հողամասը վարձակալության տրամադրելու մասին » թիվ 35-Ա որոշումը, 04.08.2017 թ-ի թիվ 8 արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76 և 81 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ    Ե Մ

1. Մրցույթում հաղթող ճանաչված Արեն Արտուշի Քոչարյանին 25 տարի ժամանակով վարձակալության տրամադրել 06-023-0238-0014 ծածկագրի գյուղնշանակության 4-րդ կարգի վարելահողը /0.10438 հա/՝ տարեկան 1400դրամ վարձավճարով և կնքել վարձակալության պայմանագիր:

2. Հողամասի պետական գրանցման ծախսերն իրականացնել Արեն Քոչարյանի հաշվին:

3. Պայմանագիրը 10 օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չներկայացնելու դեպքում սույն որոշումը համարել չեղյալ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**